



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Շ Ի Ր Ա Կ Ի Մ Ա Ր Ձ

Գ Յ ՈՒ Մ Ր Ի Հ Ա Մ Ա Յ Ն Ք

<<30>> ապրիլի 2015 թվական

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 4

Գ Յ ՈՒ Մ Ր Ի Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն ՈՒ Հ Ե Ր Թ Ա Կ Ա Ն Ն Ի Ս Տ Ի

- ՆԻՍԸ ՎԱՐՈՒՄ Է՝** Գյումրի համայնքի ղեկավար Ս.Մ.Բալասանյանը
- ՆԻՍԸ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է՝** Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռ.Ասատրյանը
- ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ՝** Գյումրի համայնքի ավագանու անդամներ՝

Ա. Ադամյան Ա. Բաղդամյան Ա.Գրիգորյան Վ.Եղիգարյան Գ.Թաթարյան Հ. Խաչատրյան
Հ.Կարապետյան Տ.Հովհաննիսյան Ն.Մեսրոպյան Ռ.Մխիթարյան Է.Մկրտչյան Վ.Շիրինյան
Ե. Պողոսյան Մ. Սահակյան

ՆԻՍՏԻՆ ՀՐԱՎԻՐՎԱԾ ԵՆ՝ Համայնքի ղեկավարի խորհրդականներ՝ Ա.Բալաբեկյանը, Վ.Սուքիասյանը, Ա.Մովսեսյանը, Հ.Սարգսյանը, քաղաքապետարանի աշխատակազմի՝ ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Զիլավյանը, բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետ Կ.Մանասյանը, քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետ Ա.Հակոբյանը, քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանը, ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի պետ Ս.Ղազարյանը, կրթության բաժնի պետ Հ.Սուլթանյանը, ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետ Մ.Ղազարյանը, համայնքային գույքի հաշվառման և կառավարման բաժնի պետ Ա.Դավթյանը, վերահսկողության բաժնի պետ Ա.Համբարձումյանը, բյուջեի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ս.Մինասյանը, գովազդի բաժնի պետ Հ.Թադևոսյանը, իրավաբանական ապահովման բաժնի պետ Ա.Գրիգորյանը, ծրագրերի, արտաքին կապերի և արարողակարգի բաժնի պետ Ա. Հովհաննիսյանը, տրանսպորտի բաժնի պետ Ա. Եղոյանը, ներքին աուդիտի բաժնի պետ Կ. Խաչատրյանը:

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ ՆԱԵՎ՝

ՁԼՄ-ների ներկայացուցիչներ, ՀԿ-ներ (ցուցակը կցվում է)

ԼՍԵՑԻՆ.

1. ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Գյումրի համայնքի ավագանու 2015 թվականի ապրիլի 30-ի հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 205-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ.ՍԱՆՈՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ.ԶԻԼԱՎՅԱՆ)**

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ. Զիլավյանին:

Լ.Զիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2015թվականի բյուջեն հաստատելու մասին» N 205-Ն որոշմամբ հաստատված Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 2-րդ և 3-րդ հատվածներում կատարել փոփոխություններ՝ շարադրելով նոր խմբագրությամբ՝ համաձայն համապատասխանաբար՝ NN 1, 2 հավելվածների:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ կատարել համապատասխան փոփոխությունները օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

3. ՄԱՅԻՍՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ. ԶԻԼԱՎՅԱՆ)**

Համայնքի ղեկավարի տեղակալը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Զիլավյանին:

Լ.Զիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հատկացնել դրամական օգնություն սոցիալապես ծանր պայմաններում ապրող ներքոգրյալ ընտանիքներին և անձանց.

1) արցախյան պատերազմում (1991-1994թթ.) զոհված՝ թվով 105 (մեկ հարյուր հինգ) ազատամարտիկների ընտանիքներին, յուրաքանչյուրին 20.000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 2.100.000 (երկու միլիոն մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N1 հավելվածի,

2) զոհված (մահացած) թվով 164 (մեկ հարյուր վաթսուհինգ) զինծառայողների ընտանիքներին, յուրաքանչյուրին 20.000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 3.280.000 (երեք միլիոն երկու հարյուր ութսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N2 հավելվածի,

3) արցախյան պատերազմի 1-ին կարգի հաշմանդամ թվով 18 (տասնութ) ազատամարտիկներին, յուրաքանչյուրին 15.000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 270.000 (երկու հարյուր յոթանասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N3 հավելվածի,

4) 2-րդ, 3-րդ կարգի հաշմանդամ թվով 242 (երկու հարյուր քառասուներկու) ազատամարտիկներին, յուրաքանչյուրին 10.000 (տասն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 2.420.000 (երկու միլիոն չորս հարյուր քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N4 հավելվածի,

5) Գյումրի քաղաքի Հայրենական Մեծ պատերազմի մասնակից թվով 61 (վաթսույնմեկ) վետերաններին, յուրաքանչյուրին 15.000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 915.000 (իննը հարյուր տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N5 հավելվածի,

6) 1956 թվականի հոկտեմբերին Հունգարիայի հեղաշրջման ճնշմանը մասնակից թվով 35 (երեսունհինգ) վետերաններին, յուրաքանչյուրին 15.000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 525.000 (հինգ հարյուր քսանհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N6 հավելվածի,

7) Աֆղանստանի Դեմոկրատական Հանրապետության տերիտորիայում մարտական գործողությունների ժամանակ զոհված թվով 4 (չորս) զինծառայողների ընտանիքներին, յուրաքանչյուրին 15.000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 60.000 (վաթսույն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N7 հավելվածի,

8) երկրապահ կամավորների միության անդամներ, սոցիալապես անապահով թվով 16 (տասնվեց) ազատամարտիկներին, յուրաքանչյուրին 15.000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 240.000 (երկու հարյուր քառասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N8 հավելվածի:

2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին սույն որոշման 1-ին կետում նշված գումարների հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 10/4/1 գործառական դասակարգման (4729) <<Այլ նպաստներ բյուջեից>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

4. <<ԵՐԿՐԱՊԱՀ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ>> ԳՅՈՒՄՐՈՒ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻՆ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՁԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

ՀԱՐԱԿԻՑ ՁԵԿՈՒՑՈՂ՝ Լ. ԶԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարի տեղակալը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Զիլավյանին:

Լ.Զիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

**կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 0**

ՈՐՈՇԵՑԻՆ.

- 1. 2015թվականի մայիսյան տոներին նվիրված՝ Եռաբլուրում և Սարդարապատում անցկացվելիք միջոցառումներին մասնակցելու համար <<Երկրապահ Կամավորականների Միություն>> Գյումրու տարածքային բաժանմունքին հատկացնել 240.000 (երկու հարյուր քառասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
- 2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

**5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻՆ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ՁԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ՁԵԿՈՒՑՈՂ՝ Լ. ԶԻԼԱՎՅԱՆ)**

Համայնքի ղեկավարի տեղակալը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Զիլավյանին:
Լ.Զիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

**կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 0**

ՈՐՈՇԵՑԻՆ.

- 1.2015 թվականին նախատեսված բազմաբնույթ գրական միջոցառումները պատշաճ մակարդակով կազմակերպելու և իրականացնելու համար Հայաստանի Գրողների Միության Շիրակի մարզային բաժանմունքին որպես նվիրատվություն հատկացնել 600.000 (վեց հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
- 2.Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին ` սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ այն փոխանցելով Ամերիա բանկ 1570001185520100 հաշվեհամարին:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՅՐԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ <<ԳՅՈՒՄՐԻ ՌԻՍՈՒՄԱ-ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՈՐՊԵՍ ՆԿԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ՁԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ՁԵԿՈՒՑՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)**

Համայնքի ղեկավարի տեղակալը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

**կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 0**

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. <<Գյումրիի ուսումնա-արտադրական ձեռնարկություն>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը որպես նվիրատվություն ամեն ամիս (2015 թվականի մայիսից մինչև 2015 թվականի դեկտեմբերը ներառյալ) հատկացնել 20.000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՌԻՍԹԱՎԵԼԻ ՓՈՂՈՑԻ 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔԻ ԹԻՎ 33 ՏԱՆԸ ԿԻՑ, ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԻ ՔԱՆԴՄԱՆ, ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՂԲԻ ՀԵՌԱՑՄԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԱԽԿԻՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ <<ՏԻՄ-ՇԻՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ՁԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ՁԵԿՈՒՑՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)**

Համայնքի ղեկավարի տեղակալը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

**կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 0**

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. <<ՏԻՄ-ՇԻՆ>> փակ բաժնետիրական ընկերությանը հատկացնել 254.442 (երկու հարյուր հիսունչորս հազար չորս հարյուր քառասուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ՝ Գյումրի քաղաքի Ռուսթավելի փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 33 տանը կից Գյումրի համայնքին պատկանող հողամասի վրա գտնվող ինքնակամ կառույցի քանդման, շինարարական աղբի հեռացման և հողամասի նախկին վիճակի վերականգման աշխատանքների իրականացման համար:

2. Հանձնարարել քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 6/6/1 գործառական դասակարգման (4251) <<Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ <<ԱՆԻ ՓՈՂԱՅԻՆ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)**

Համայնքի ղեկավարի տեղակալը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

**կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 0**

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Անհրաժեշտ երաժշտական գործիքներ ձեռք բերելու նպատակով Գյումրու համայնքային ենթակայության <<Անի փողային նվագախումբ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնել 56.000 (հիսունվեց հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Հանձնարարել Գյումրու քաղաքապետարանի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻՆ ԲԱՂՆԻՔԻ ԵՎ ՎԱՐՍԱՎԻՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ, ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՆՈՒՄՆԵՐԸ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ՝ ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՁԵՎՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

**(ՁԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ՁԵԿՈՒՑՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)**

Համայնքի ղեկավարի տեղակալը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանին:
Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

**կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 0**

ՈՐՈՇԵՑԻՆ.

- 1. Հատկացնել 9.984.000 (ինը միլիոն ինը հարյուր ութսունչորս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ յուրաքանչյուր ամիս սոցիալապես անապահով թվով 960 (ինը հարյուր վաթսուն) շահառուների բաղնիքի և վարսավիրական ծառայություններից օգտվելու համար:
- 2. Շահառուների ցանկը Գյումրի համայնքի ավագանու սոցիալական, առողջապահության և բնության պահպանության հարցերի մշտական հանձնաժողովի ներկայացմամբ հաստատում է համայնքի ղեկավարը:
- 3. Թույլատրել անհրաժեշտ գնումները իրականացնել բանակցային ընթացակարգի կիրառմամբ՝ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու:
- 4. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4239) «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՆ ՈՐՊԵՍ ՆԿԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ՁԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ՁԵԿՈՒՑՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)**

Համայնքի ղեկավարի տեղակալը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանին:
Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի թատերական գործիչների միության Գյումրու մասնաճյուղին որպես նվիրատվություն հատկացնել 250.000 (երկու հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված «Հիշում ենք և պահանջում» խորագրով միջոցառումները պատշաճ կարգով կազմակերպելու և իրականացնելու համար:

2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 8/4/2 գործառնական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

**11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 6-Ի N 19-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ՁԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ՁԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)**

Համայնքի ղեկավարի տեղակալը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2015 թվականի փետրվարի 6-ի «Հայաստանի Հանրապետության Շրակի մարզի Գյումրու համայնքային սեփականություն հանդիսացող, կառուցապատման նպատակով առանձնացված հողամասերն աճուրդով օտարելու և աճուրդի մեկնարկային գներ և պայմաններ հաստատելու մասին» N 19-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) 2-րդ տողի 6-րդ սյունակում «2.200.000» թիվը փոխարինել «2.100.000» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ, ԿԱՌՈՒՑԱԴԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՌԱՆՁՆԱՑԿԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ՁԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ՁԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՄՊԱՐՅԱՆ)**

Համայնքի ղեկավարի տեղակալը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

**կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 0**

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Տալ համաձայնություն Գյումրի համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, կառուցապատման նպատակով առանձնացված հողամասերն աճուրդային կարգով օտարելուն և հաստատել հողամասերի օտարման աճուրդի մեկնարկային գներն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԱՆԻ ԹԱՂԱՄԱՍԻ 11-ՐԴ ՓՈՂՈՑԻ N 10/5 ՀԱՍՑԵԻ ԱՆԱՎԱՐՏ ՇԵՆՔԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ՁԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ՁԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՄՊԱՐՅԱՆ)**

Համայնքի ղեկավարի տեղակալը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

**կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 0**

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Թույլատրել Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Անի թաղամասի 11-րդ փողոցի N 10/5 հասցեի 297,47 (երկու հարյուր իննսունյոթ ամբողջ քառասունյոթ հարյուրերորդական) քառակուսի

մետր մակերեսով անավարտ շենքը և կառուցապատման ու սպասարկման համար զբաղեցրած 481,0 (չորս հարյուր ութսունմեկ) քառակուսի մետր մակերեսով հողամասը, օտարել աճուրդային կարգով:

2. Ելնելով <<Պ.Ա.Գ. Էսթեյթ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2015 թվականի ապրիլի 20-ի թիվ-056 հաշվետվության եզրակացությամբ գնահատված շուկայական արժեքից՝ 297,47 (երկու հարյուր ինսունյոթ ամբողջ քառասունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով անավարտ շենքը և կառուցապատման ու սպասարկման համար զբաղեցրած 481,0 (չորս հարյուր ութսունմեկ) քառակուսի մետր մակերեսով հողամասի համար օտարման մեկնարկային գին հաստատել 2.000.000 (երկու միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամը:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

**14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՂԱՐՍԻ ԽՃՈՒՂԻ N 4/7 ՀԱՍՑԵԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ.ՍԱՆՈՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)**

Համայնքի ղեկավարի տեղակալը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

- կողմ – 14**
- դեմ – 0**
- ձեռնպահ – 0**

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Թույլատրել Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Ղարի խճուղի N 4/7 հասցեի 31,36 (երեսունմեկ ամբողջ երեսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր ընդհանուր մակերեսով շինությունները և կառուցապատման ու սպասարկման համար զբաղեցրած 2333,0 (երկու հազար երեք հարյուր երեսուներեք) քառակուսի մետր մակերեսով հողամասը, օտարել աճուրդային կարգով:
2. Ելնելով <<Պ.Ա.Գ. Էսթեյթ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2015 թվականի ապրիլի 20-ի թիվ-057 հաշվետվության եզրակացությամբ գնահատված շուկայական արժեքից՝ 31,36 (երեսունմեկ ամբողջ երեսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր ընդհանուր մակերեսով շինությունները և կառուցապատման ու սպասարկման համար զբաղեցրած 2333,0 (երկու հազար երեք հարյուր երեսուներեք) քառակուսի մետր մակերեսով հողամասի համար օտարման մեկնարկային գին հաստատել 3.280.000 (երեք միլիոն երկու հարյուր ութսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամը:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

**15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՂՈՒԿԱՍՅԱՆ ՓՈՂՈՑ N 126 ՀԱՍՑԵԻ ՇԵՆՔԸ ԲՆԱԿՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)**

Համայնքի ղեկավարի տեղակալը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական N 2420945) Ղուկասյան փողոց N 126 հասցեի հասարակական շենքը բնակվելու նպատակով անհատույց օգտագործման տրամադրել նշված շենքում բնակություն հաստատած թվով 9 (ինը) ընտանիքներին՝ համաձայն հավելվածի:
2. Սահմանել, որ՝
 - 1) բնակվելու նպատակով անհատույց օգտագործման իրավունքով ամեն մի ընտանիքին հատկացվող տարածքի մակերեսը որոշվելու է ընտանիքի անդամների քանակին և կազմին համապատասխան՝ ելնելով նորմատիվ պահանջներից,
 - 2) շենքի օգտագործման, պահպանման, սպասարկման, վերանորոգման և այլ պայմանների հետ կապված պարտավորություններն ու պահանջները մանրամասնել___համապատասխան պայմանագրերով:
3. Բնակվելու նպատակով անհատույց օգտագործման իրավունք ստացած անօթևան ընտանիքներին հանել պետական միջոցներով կառուցվող բնակարաններ ստացողների հերթացուցակից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

16. ՄՐՅՈՒՅԹՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԱՌԱՆՁՆԱՅՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ՁԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ՁԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)**

Համայնքի ղեկավարի տեղակալը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

Տալ համաձայնություն Գյումրի համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, կառուցապատման նպատակով առանձնացված հողամասերը

մրցույթով կառուցապատման իրավունքով տրամադրելուն և հաստատել հողամասերի վարձավճարների մեկնարկային չափերը՝ համաձայն հավելվածի:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

17. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՕՂԱԿԱՅԻՆ ՓՈՂՈՑ N 63/1 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿՆԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարի տեղակալը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14

դեմ – 0

ծեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Թույլատրել Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Օղակային փողոց N 63/1 հասցեի 216,32 (երկու հարյուր տասնվեց ամբողջ երեսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով ավտոտնակները և կառուցապատման ու սպասարկման համար զբաղեցրած 248,12 (երկու հարյուր քառասունութ ամբողջ տասներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, օտարել աճուրդային կարգով:
2. Ելնելով <<Պ.Ա.Գ. Էսթեյթ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2015 թվականի հունվարի 22-ի թիվ-008 հաշվետվության եզրակացությամբ գնահատված շուկայական արժեքից՝ 216,32 (երկու հարյուր տասնվեց ամբողջ երեսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով ավտոտնակների և կառուցապատման ու սպասարկման համար զբաղեցրած 248,12 (երկու հարյուր քառասունութ ամբողջ տասներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի համար օտարման մեկնարկային գին հաստատել 960.000 (ինն հարյուր վաթսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամը:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

18. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի NN 139-Ա, 140-Ն, 149-Ա, 151-Ա, 160-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարի տեղակալը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 14-ի թվով 5 (հինգ) որոշումներում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.
 - 1) «Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 14-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին» N 139-Ա որոշման հավելվածի 2-րդ կետում և «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի N 161-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 140-Ն որոշման վերնագրում «համայնքի» բառից հետո ավելացնել «ավագանու» բառը,
 - 2) «Տարեմուտի կապակցությամբ դրամական օգնություն հատկացնելու մասին» N 149-Ա որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետում «երկու միլիոն երեսունինը» բառերը փոխարինել «երկու միլիոն երեք հարյուր իննսուն» բառերով,
 - 3) «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի կողմից 2014 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին» որոշման 1-ին կետում «հունիսի» բառը փոխարինել «հուլիսի» բառով,
 - 4) «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղարսի խճուղի N 6/3 հասցեում գտնվող անշարժ գույքը և հողամասը մրցույթով վարձակալության տրամադրելու և վարձավճարի չափ սահմանելու մասին» որոշման 1-ին «վարձակալություն» բառից հետո ավելացնել «50 (հիսուն) տարի ժամկետով» թիվը և բառերը:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

19. 2015 ԹՎԱԿԱՆԻ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԱՎԵԼ ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ՑՈՒՑԱԲԵՐԱԾ ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԱՐԶԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Մ. ՂԱԶԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարի տեղակալը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետ Մ. Ղազարյանին:

Մ.Ղազարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14
դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. 2015 թվականին Եվրոպայի ծանրամարտի, հունա-հռոմեական ոճի ըմբշամարտի և սամբոյի առաջնություններում չեմպիոններ և մրցանակակիրներ դարձած մարզիկներին և նրանց մարզիչներին շնորհել դրամական պարգևներ 1.800.000 (մեկ միլիոն ութ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4727) «Սպորտային պարգևներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

20. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՍԱՄՐՈ-ՁՅՈՒԴՈՅԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱԴԱՇՏԻ ՓԼՎԱԾ ՊԱՐՍՊԻ ՆՈՐՈԳՄԱՆ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Մ. ՂԱԶԱՐՅԱՆ)**

Համայնքի ղեկավարի տեղակալը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետ Մ. Ղազարյանին:
Մ. Ղազարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

**կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 0**

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի «Սամբո-ձյուդոյի մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնել 420.000 (չորս հարյուր քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ փված պարսպի նորոգման նպատակով պահանջվող շինարարական նյութեր ձեռք բերելու համար՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

21. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԼԻՐ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՇԻՆՎԵՐԱՆՈՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Մ. ՂԱԶԱՐՅԱՆ)**

Համայնքի ղեկավարի տեղակալը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետ Մ. Ղազարյանին:

Մ. Ղազարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

**կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 0**

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի «Արամ Սարգսյանի անվան Համալիր մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնել 930.000 (ինը հարյուր երեսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ մարզադպրոցի դահլիճի նորոգման, պատշաճ տեսքի բերման, համաշխարհային համահայկական 6-րդ խաղերի ծրագրով անցկացվող մինի ֆուտբոլի մարզաձևին համապատասխանեցնելու նպատակով պահանջվող շինարարական նյութեր ձեռք բերելու համար՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

22. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ. ՍՈՒԼՔԱՆՅԱՆ)**

Համայնքի ղեկավարի տեղակալը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի կրթության բաժնի պետ Հ. Սուլթանյանին:

Հ. Սուլթանյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

**կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 0**

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրու համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններում ընթացիկ վերանորոգումներ իրականացնելու, ինչպես նաև գույք ձեռք բերելու նպատակով տրամադրել 7.000.000 (յոթ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 9/6/1 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

23. <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՅՐԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՈՒՍՈՒՄԱ-ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂՈՒԿԱՍՅԱՆ 98 ԵՎ ՄԱՅԱԿՈՎԱԿՈՒ 144 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ՁԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ՁԵԿՈՒՑՈՂ՝ Ս. ՄԻՆԱՍՅԱՆ)**

Համայնքի ղեկավարի տեղակալը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի բյուջեի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ս. Մինասյանին:
Ս.Մինասյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

**կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 0**

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Սահմանել արտոնություն <<Հայաստանի Կույրերի Միավորման Գյումրիի ուսումնա-արտադրական ձեռնարկություն>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ղուկասյան 98 և Մայակովսկու 144 հասցեներում գտնվող շենքերի և շինությունների 2015 թվականի գույքահարկի և հողի հարկի գումարների վճարումների նկատմամբ՝ ազատելով համապատասխանաբար՝ 176.000 (մեկ հարյուր յոթանասունվեց հազար) Հայաստանի Հանրապետության դրամ և 18.746 (տասնութ հազար յոթ հարյուր քառասունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 194.746 (մեկ հարյուր ինսունչորս հազար յոթ հարյուր քառասունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

24. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 15 ՀԱՄԱՏԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՏԱՆԻՔՆԵՐԻ ԵՎ ՄՈՒՏՔԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՀԱՄԱՐ ՍՈՒԲՍԻԴԻԱ ՀԱՏՎԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարի տեղակալը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ. Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի թվով 15 (տասնհինգ) համատիրություններին տրամադրել սուբսիդիա 19.200.000 (տասնինը միլիոն երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ սպասարկման տարածքներում գտնվող բազմաբնակարան շենքերի տանիքների և մուտքերի վերանորոգման նպատակով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 6/6/1 գործառական դասակարգման (4521) «Սուբսիդիաներ ոչ պետական, ոչ ֆինանսական կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

25. ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ 216 (ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆՎԵՅ) ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարի տեղակալը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ. Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Թվով 216 (երկու հարյուր տասնվեց) անձանց կանխիկ տրամադրել 2.160.000 (երկու միլիոն մեկ հարյուր վաթսուս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

26. ՄԱՐՈՒՍՅԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ԵՎ ԷՄԻՆ ՄԱԴՈՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ՁԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ՁԵԿՈՒՑՈՂ՝ Լ. ՋԻԼԱՎՅԱՆ)**

Համայնքի ղեկավարի տեղակալը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը սովեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ. Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

**կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 0**

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հատկացնել դրամական օգնություն հրդեհից այրված ժամանակավոր տնակներում բնակվող անօթևան մնացած, սոցիալապես ծանր պայմաններում հայտնված ներքոգրյալ ընտանիքներին՝
 - 1) Էմին Մադոյանի ընտանիքին՝ 400.000 (չորս հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ,
 - 2) Մարուայա Թադևոսյանի ընտանիքին՝ 200.000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարների հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) <<Այլ նպաստներ բյուջեից>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

27. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի №190-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ՁԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ՁԵԿՈՒՑՈՂ՝ Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ)**

Համայնքի ղեկավարի տեղակալը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը սովեց աշխատակազմի իրավաբանական ապահովման բաժնի պետ Ա. Գրիգորյանին:

Ա.Գրիգորյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

**կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 0**

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 12-ի «Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմինն կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին» №190-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ հավելվածի 5-րդ կետի «Ռուզաննա Բալաբեկյան» բառերը փոխարինել «Գայանե Գալոյան» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց